



ARMENIAN

ԳԱՐՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՍՈՒՅՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾԿԵԼ ԵՎ ԲԱՑԱՅԱՅՏԿԵԼ ՁԵՉ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼ ԱՅԴ ՏԵՐԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ: ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ:

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ Սույն ծանուցումն ուժի մեջ է մտնում 2026թ. մայիսի 1-ից:

I. Ովքեր են ներկայացնում սույն ծանուցումը

Սույն համատեղ ծանուցումը («Ծանուցում») նկարագրում է, թե ինչպես է ձեր բժշկական տեղեկատվությունն օգտագործվելու և բացահայտվելու «Pipeline Health LLC»-ի («Pipeline Health»), Նրա աշխատակազմի, բժշկական անձնակազմի և դաշնակից առողջապահական մասնագետների կողմից, որոնք գործունեություն են ծավալում Pipeline Health-ի ցանկացած հաստատությունում, ներառյալ հետևյալ «Հիվանդանոցը» կամ միասին՝ «Հիվանդանոցները».

- *Memorial Hospital of Gardena*
- *Community Hospital of Huntington Park*
- *East Los Angeles Doctors Hospital*
- *Coast Plaza Hospital*

Սույն Ծանուցման մեջ Pipeline Health-ը, Նրա հիվանդանոցները և այն անհատական առողջապահական ծառայություններ մատուցողները, որոնք ծառայություններ են տրամադրում հիվանդանոցներում, երբեմն միասին նշվում են «մենք» կամ «մեզ» բառերով: Թեև Pipeline Health-ը, Նրա հիվանդանոցները և առողջապահական մասնագետները մասնակցում են բազմաթիվ համատեղ գործունեությունների և ծառայությունների են մատուցում կլինիկորեն ինտեգրված խնամքի համակարգում, հիվանդանոցները և առողջապահական մասնագետները առանձին իրավաբանական անձինք են և առանձին պատասխանատվություն են կրում սույն Ծանուցման և կիրառելի օրենքների պահանջների պահպանման համար:

Սույն Ծանուցումը վերաբերում է ցանկացած Pipeline Health հաստատությունում հիվանդանոցային կամ ամբուլատոր պայմաններում ձեզ տրամադրվող ծառայություններին կամ հիվանդանոցին կից ծրագրի շրջանակներում ձեզ տրամադրվող ցանկացած այլ



ծառայության, որը ներառում է ձեր բժշկական տեղեկատվության (հայտնի է որպես «պաշտպանված առողջապահական տեղեկատվություն» կամ «PHI») օգտագործումը կամ բացահայտումը: Ձեր բժիշկները և այլ առողջապահական ծառայություններ մատուցողներն իրենց սեփական գրասենյակներում կամ կլինիկաներում ձեր պաշտպանված առողջապահական տեղեկատվության (PHI) օգտագործման և բացահայտման վերաբերյալ կարող են ունենալ տարբեր գործելակերպեր կամ ծանուցումներ:

Եթե ունեք որևէ հարց այս ծանուցման վերաբերյալ, խնդրում ենք կապ հաստատել Pipeline Health LLC-ի կորպորատիվ գրասենյակների հետ՝ 310-356-0515 հեռախոսահամարով՝ մեր Գաղտնիության գլխավոր պատասխանատուի հետ խոսելու համար:

ՈՎՔԵՐ ԵՆ ՅԵՏԵՎԵԼՈՒ ԱՅՍ ԾԱՆՈՒՑՄԱՆԸ

Սույն ծանուցումը նկարագրում է մեր հիվանդանոցների, ինչպես նաև հետևյալ անձանց և բաժինների գործելակերպը.

- Ցանկացած առողջապահական մասնագետ, որը լիազորված է ձեր հիվանդանոցային բժշկական քարտում տեղեկատվություն մուտքագրելու համար:
- Հիվանդանոցի բոլոր բաժիններն ու ստորաբաժանումները:
- Ցանկացած կամավորական խմբի անդամ, որին մենք թույլ ենք տալիս օգնել ձեզ հիվանդանոցում գտնվելու ընթացքում:
- Բոլոր աշխատակիցները, անձնակազմը և հիվանդանոցի այլ աշխատողները:

Այս բոլոր կազմակերպությունները, կենտրոնները և հաստատությունները հետևում են սույն ծանուցման դրույթներին: Բացի այդ, այս կազմակերպությունները, կենտրոնները և հաստատությունները կարող են միմյանց հետ փոխանակել բժշկական տեղեկատվություն՝ բուժման, վճարման կամ առողջապահական ծառայությունների կառավարման նպատակներով, ինչպես նկարագրված է սույն ծանուցման մեջ:

ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մենք հասկանում ենք, որ ձեր և ձեր առողջության վերաբերյալ բժշկական տեղեկատվությունը անձնական է: Մենք հանձնառու ենք պաշտպանել Ձեր մասին բժշկական տեղեկատվությունը: Մենք ստեղծում ենք հիվանդանոցում ստացած ձեր խնամքի և ծառայությունների վերաբերյալ բժշկական գրառում: Մեզ անհրաժեշտ է այս գրառումը՝ ձեզ որակյալ բուժօգնություն տրամադրելու և որոշ իրավական պահանջներին համապատասխանելու համար: Այս ծանուցումը վերաբերում է Հիվանդանոցի կողմից ստեղծված ձեր խնամքի վերաբերյալ բոլոր գրառումներին, անկախ նրանից՝ դրանք կազմվել են հիվանդանոցի անձնակազմի, թե՛ ձեր անձնական բժշկի կողմից: Ձեր անձնական բժիշկը կարող է ունենալ բժշկի գրասենյակում կամ կլինիկայում ստեղծված ձեր բժշկական տեղեկատվության օգտագործման և բացահայտման հետ կապված տարբեր քաղաքականություններ կամ ծանուցումներ: Սույն ծանուցումը ձեզ տեղեկացնում է այն եղանակների մասին, որոնց միջոցով մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը: Մենք նաև նկարագրում ենք ձեր իրավունքները և որոշ պարտականություններ, որոնք մենք ունենք բժշկական տեղեկատվության օգտագործման և բացահայտման հետ կապված:

Օրենքով պարտավոր ենք՝

- Համոզվել, որ ձեր անձը նույնականացնող բժշկական տեղեկատվությունը պահպանվում է գաղտնի (որոշ բացառություններով):
- Տրամադրել ձեզ սույն ծանուցումը մեր իրավական պարտականությունների և ձեր բժշկական տեղեկատվության հետ կապված գաղտնիության գործելակերպերի մասին:
- Տեղեկացնել ձեզ ձեր բժշկական տեղեկատվության ցանկացած խախտման կամ չարտոնված օգտագործման մասին:
- Հետևել այն ծանուցման պայմաններին, որը տվյալ պահին գործում է:



ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԵՎ ԲԱՑԱՐԱՅՏԵԼ ՁԵՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հետևյալ կատեգորիաները նկարագրում են այն տարբեր եղանակները, որոնց միջոցով մենք օգտագործում և բացահայտում ենք բժշկական տեղեկատվությունը: Յուրաքանչյուր օգտագործման կամ բացահայտման կատեգորիայի համար մենք կբացատրենք, թե ինչ նկատի ունենք և կփորձենք բերել մի քանի օրինակներ: Որոշ իրավիճակներում ձեր բժշկական գաղտնի տեղեկության (PHI) օգտագործման և/կամ բացահայտման համար անհրաժեշտ է ստանալ ձեր գրավոր թույլտվությունը:

Յուրաքանչյուր կատեգորիայում հնարավոր բոլոր օգտագործումները կամ բացահայտումները չեն թվարկվում: Այնուամենայնիվ, տեղեկատվության օգտագործման և բացահայտման բոլոր թույլատրելի ձևերը կներառվեն այս կատեգորիաներից մեկի մեջ:

Բացահայտում՝ ձեր դիմումի հիման վրա

Մենք կարող ենք բացահայտել տեղեկատվությունը, երբ դա պահանջվի Ձեր կողմից: Ձեր դիմումով կատարվող այս բացահայտումը կարող է պահանջել ձեր գրավոր թույլտվությունը:

Բուժման համար

Մենք կարող ենք օգտագործել ձեր բժշկական տեղեկատվությունը ձեզ բուժում կամ ծառայություններ տրամադրելու համար: Մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը բժիշկներին, բուժքույրերին, տեխնիկներին, բժշկական ուսանողներին կամ հիվանդանոցի այլ աշխատակիցներին, ովքեր մասնակցում են ձեր բժշկական խնամքին: Օրինակ՝ ձեր կոտրված ոտքը բուժող բժիշկը կարող է անհրաժեշտություն ունենալ իմանալ՝ արդյոք դուք ունեք շաքարախտ, քանի որ շաքարախտը կարող է դանդաղեցնել ապաքինման գործընթացը: Բացի այդ, բժիշկը կարող է անհրաժեշտ համարել տեղեկացնել սննդաբանին, եթե դուք շաքարախտ ունեք, որպեսզի կարողանանք ապահովել համապատասխան սննդակարգ: Հիվանդանոցի տարբեր բաժիններ նույնպես կարող են փոխանակել ձեր բժշկական տեղեկատվությունը՝ ձեր խնամքի տարբեր բաղադրիչները համակարգելու համար, օրինակ՝ դեղատոմսերը, լաբորատոր հետազոտությունները և ռենտգենները: Մենք կարող ենք նաև բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը հիվանդանոցից դուրս գտնվող անձանց, ովքեր կարող են ներգրավված լինել ձեր բուժման մեջ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո, օրինակ՝ հմուտ բուժքույրական հաստատություններին, տնային խնամքի ծառայություններին, ինչպես նաև բժիշկներին կամ այլ մասնագետներին: Օրինակ՝ մենք կարող ենք ձեր բժշկին տրամադրել ձեր առողջական տեղեկատվությանը հասանելիություն՝ ձեր բուժման գործընթացին աջակցելու համար:

Վճարման համար

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը, որպեսզի

հիվանդանոցում ստացած բուժումն ու ծառայությունները կարողանան հաշվարկվել և վճարման ենթարկվել ձեզ, ապահովագրական ընկերությանը կամ երրորդ կողմին: Օրինակ՝ մենք կարող ենք անհրաժեշտություն ունենալ ձեր առողջապահական ծրագրին տրամադրել տեղեկություն հիվանդանոցում կատարված վիրահատության մասին, որպեսզի այն վճարի մեզ կամ փոխհատուցի ձեզ այդ վիրահատության ծախսերը: Մենք նաև կարող ենք տեղեկացնել ձեր ապահովագրական ծրագրին այն բուժման մասին, որը դուք պատրաստվում եք ստանալ՝ նախնական հաստատում ստանալու կամ պարզելու համար՝ արդյոք ձեր ապահովագրությունը կծածկի այդ բուժումը: Մենք կարող ենք նաև տրամադրել ձեր և ձեր ապահովագրական ծրագրի, ապահովագրական ընկերության կամ վճարման այլ աղբյուրի մասին հիմնական տեղեկություններ հիվանդանոցից դուրս գտնվող այն մասնագետներին, ովքեր ներգրավված են ձեր խնամքի մեջ՝ նրանց օգնելու համար ստանալ իրենց մատուցած ծառայությունների վճարումը:

Այնուամենայնիվ, մենք չենք կարող բացահայտել ձեր տեղեկատվությունը ձեր ապահովագրական ծրագրին վճարման նպատակներով, եթե մեզ խնդրեք դա չանել, և դուք ինքներդ վճարեք ծառայությունների համար:

Առողջապահական ծառայությունների կազմակերպման նպատակներով

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը առողջապահական ծառայությունների կազմակերպման նպատակներով: Այս օգտագործումներն ու բացահայտումներն անհրաժեշտ են հիվանդանոցի աշխատանքը ապահովելու և երաշխավորելու համար, որ մեր բոլոր հիվանդները ստանան որակյալ բուժօգնություն: Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել բժշկական տեղեկատվությունը մեր տրամադրած բուժման և ծառայությունների վերանայման, ինչպես նաև ձեր խնամքի մեջ ներգրավված մեր անձնակազմի աշխատանքի գնահատման համար: Մենք կարող ենք նաև համադրել բազմաթիվ հիվանդների բժշկական տեղեկատվությունները՝ որոշելու համար, թե ինչ լրացուցիչ ծառայություններ պետք է առաջարկի հիվանդանոցը, ինչ ծառայություններ այլևս անհրաժեշտ չեն, և արդյոք որոշ նոր բուժումներ արդյունավետ են: Մենք կարող ենք նաև բժշկական տեղեկատվություն բացահայտել բժիշկներին, բուժքույրերին, տեխնիկներին, բժշկական ուսանողներին և հիվանդանոցի այլ աշխատակիցներին՝ վերանայման և ուսուցման նպատակներով: Կարող ենք նաև համադրել մեր ունեցած բժշկական տեղեկատվությունը այլ հիվանդանոցների տեղեկատվության հետ՝ համեմատելու մեր աշխատանքը և հասկանալու, թե որտեղ կարող ենք բարելավել մեր տրամադրած խնամքն ու ծառայությունները: Մենք կարող ենք հեռացնել ձեր նույնականացնող տվյալները այս բժշկական տեղեկատվության հավաքածուից, որպեսզի այլ անձինք կարողանան այն օգտագործել առողջապահության և առողջապահական ծառայությունների ուսումնասիրության համար՝ առանց իմանալու, թե ովքեր են կոնկրետ հիվանդները:

Կարևոր բացառություն՝ հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների (SUD) գրառումների համար

Վերոնշյալ բուժման, վճարման և առողջապահական ծառայությունների կազմակերպման նպատակներով օգտագործումները կիրառվում են ձեր առողջական տեղեկատվության մեծ մասի



նկատմամբ: Այնուամենայնիվ, եթե դուք ստանում եք հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների դեմ բուժում, դաշնային օրենքը (42 CFR Մաս 2) լրացուցիչ պաշտպանություն է նախատեսում այդ գրառումների համար: Մեզ, որպես կանոն, անհրաժեշտ է Ձեր հատուկ գրավոր համաձայնությունը, նախքան մենք կարողանանք օգտագործել կամ բացահայտել հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների դեմ բուժման գրառումները բուժման, վճարման կամ առողջապահական գործողությունների համար, ի տարբերություն այլ առողջապահական տեղեկատվության: Այս ուժեղացված պաշտպանության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ստորև բերված 5-րդ բաժինը՝ «Հատուկ կանոններ հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների գրառումների համար» վերնագրով:

Այլ օգտագործումներ և բացահայտումներ, որոնք կարող ենք կատարել առանց ձեր թույլտվության

Մենք կարող ենք նաև օգտագործել կամ բացահայտել ձեր առողջական տեղեկատվությունը հետևյալ նպատակներով՝ առանց ձեր թույլտվության.

Ֆոնդահայթայթման գործողություններ

Մենք կարող ենք օգտագործել ձեր մասին տեղեկատվությունը կամ այն տրամադրել հիվանդանոցի հետ կապված հիմնադրամին՝ ձեզ հետ կապ հաստատելու և հիվանդանոցի ու նրա գործունեության համար միջոցներ հավաքելու նպատակով: Դուք իրավունք ունեք հրաժարվել ֆոնդահայթայթման վերաբերյալ հաղորդագրություններ ստանալուց: Եթե դուք ստանաք նման հաղորդակցություն, այնտեղ կնշվի, թե ինչպես կարող եք հրաժարվել դրանցից:

Հիվանդանոցի տեղեկատու

Մենք կարող ենք ձեր մասին որոշակի սահմանափակ տեղեկություններ ներառել հիվանդանոցի տեղեկատուում, քանի դեռ դուք հիվանդանոցի հիվանդ եք: Այս տեղեկատվությունը կարող է ներառել ձեր անունը, հիվանդանոցի գտնվելու վայրը, ձեր ընդհանուր վիճակը (օրինակ՝ լավ, բավարար և այլն) և ձեր կրոնական պատկանելությունը: Եթե ձեր կողմից չկա հատուկ գրավոր դիմում հակառակ բովանդակությամբ, ապա այս տեղեկատուի տվյալները, բացառությամբ ձեր կրոնական պատկանելության, կարող են տրամադրվել այն անձանց, ովքեր ձեզ փնտրում են անունով: Ձեր կրոնական պատկանելությունը կարող է փոխանցվել հոգևորականին, օրինակ՝ քահանային կամ ռաբբիին, նույնիսկ եթե նրանք ձեզ անունով չեն փնտրում: Այս տեղեկատվությունը տրամադրվում է, որպեսզի ձեր ընտանիքը, ընկերները և հոգևորականները կարողանան այցելել ձեզ հիվանդանոցում և ընդհանուր պատկերացում ունենալ ձեր վիճակի մասին:

Ձեր բժշկական խնամքին կամ ձեր խնամքի վճարմանը ներգրավված անձանց

Մենք կարող ենք տրամադրել ձեր բժշկական տեղեկատվությունը այն ընկերոջը կամ ընտանիքի անդամին, ով ներգրավված է ձեր բժշկական խնամքի մեջ: Մենք կարող ենք նաև տեղեկատվություն տրամադրել այն անձին, ով օգնում է վճարել ձեր բժշկական խնամքի

համար: Եթե ձեր կողմից չկա հատուկ գրավոր դիմում հակառակը պահանջող, մենք կարող ենք նաև ձեր ընտանիքին կամ ընկերներին հայտնել ձեր վիճակը և այն, որ դուք գտնվում եք հիվանդանոցում:

Բացի այդ, մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը աղետների օգնության աշխատանքներին աջակցող կազմակերպությանը, որպեսզի ձեր ընտանիքը տեղեկացվի ձեր վիճակի, կարգավիճակի և գտնվելու վայրի մասին: Եթե դուք ժամանեք շտապ օգնության բաժանմունք անգիտակից վիճակում կամ այլ կերպ չկարողանաք հաղորդակցվել, մենք պարտավոր ենք փորձել կապ հաստատել այն անձի հետ, ով, մեր կարծիքով, կարող է ձեր փոխարեն ընդունել առողջապահական որոշումներ (օրինակ՝ ընտանիքի անդամ կամ առողջապահական լիազորագրով նշանակված ներկայացուցիչ):

Չետազոտության համար

Որոշ պայմաններում մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը հետազոտական նպատակներով: Օրինակ՝ հետազոտական նախագիծը կարող է ներառել համեմատություն այն բոլոր հիվանդների առողջական վիճակի և վերականգնման միջև, ովքեր ստացել են մեկ դեղամիջոց, և նրանց, ովքեր նույն հիվանդության համար ստացել են մեկ այլ դեղամիջոց: Այնուամենայնիվ, բոլոր հետազոտական նախագծերը ենթակա են հատուկ հաստատման գործընթացի: Այս գործընթացը գնահատում է առաջարկվող հետազոտական նախագիծը և դրա կողմից բժշկական տեղեկատվության օգտագործումը՝ փորձելով հավասարակշռել հետազոտության կարիքները և հիվանդների բժշկական տեղեկատվության գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը: Մինչև բժշկական տեղեկատվության օգտագործումը կամ բացահայտումը հետազոտության նպատակներով, նախագիծը պետք է հաստատված լինի այս գործընթացի միջոցով: Սակայն մենք կարող ենք նաև ձեր բժշկական տեղեկատվությունը տրամադրել այն անձանց, ովքեր պատրաստվում են իրականացնել հետազոտական նախագիծ, օրինակ՝ օգնելու նրանց գտնել հատուկ բժշկական կարիքներ ունեցող հիվանդներ, պայմանով, որ նրանք չեն հանում այդ տեղեկատվությունը հիվանդանոցից:

Օրենքով պահանջված դեպքերում

Մենք կբացահայտենք ձեր բժշկական տեղեկատվությունը, երբ դա պահանջվում է դաշնային, նահանգային կամ տեղական օրենքով:

Առողջությանը կամ անվտանգությանը լուրջ սպառնալիքից խուսափելու համար

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր մասին բժշկական տեղեկությունները, երբ դա անհրաժեշտ է՝ ձեր առողջությանը և անվտանգությանը կամ հանրության կամ մեկ այլ անձի առողջությանը և անվտանգությանը լուրջ սպառնալիք կանխելու համար: Այնուամենայնիվ, ցանկացած բացահայտում կկատարվի միայն այն անձին, ով կարող է օգնել կանխել այդ վտանգը:

Հանդիպումների մասին հիշեցումներ

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր առողջական տեղեկատվությունը՝ ձեզ հետ կապ հաստատելու համար՝ որպես հիշեցում ձեր նշանակված հանդիպման մասին:

Բուժման այլընտրանքներ և առողջապահական ծառայություններ

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր առողջական տեղեկությունները՝ ձեզ տեղեկացնելու կամ խորհուրդ տալու համար այն հնարավոր բուժման տարբերակների, այլընտրանքների կամ առողջապահական նպաստների և ծառայությունների մասին, որոնք կարող են հետաքրքրել ձեզ:

ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Օրգանների և հյուսվածքների նվիրատվություն

Մենք կարող ենք տրամադրել բժշկական տեղեկատվություն այն կազմակերպություններին, որոնք զբաղվում են օրգանների ձեռքբերմամբ կամ օրգանների, աչքերի կամ հյուսվածքների փոխապատվաստմամբ՝ անհրաժեշտության դեպքում օրգանների կամ հյուսվածքների նվիրատվությունն ու փոխապատվաստումը ապահովելու համար:

Զինվորականներ և վետերաններ

Եթե դուք զինված ուժերի անդամ եք, մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը՝ զինվորական հրամանատարական իշխանությունների պահանջի համաձայն: Մենք կարող ենք նաև բացահայտել օտարերկրյա զինվորական անձնակազմի բժշկական տեղեկատվությունը համապատասխան օտարերկրյա զինվորական իշխանություններին:

Աշխատողների փոխհատուցում

Մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը աշխատողների փոխհատուցման կամ նմանատիպ ծրագրերի համար: Այս ծրագրերը ապահովում են նպաստներ աշխատանքի հետ կապված վնասվածքների կամ հիվանդությունների դեպքում:

Հանրային առողջապահական գործունեություն

Մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը հանրային առողջապահական գործունեության նպատակներով: Այս գործունեությունները սովորաբար ներառում են հետևյալը.

- Հիվանդությունների, վնասվածքների կամ հաշմանդամության կանխարգելում կամ վերահսկում,

- Ճնուկների և մահերի մասին հաղորդում,
- Երեխաների, տարեցների և կախյալ մեծահասակների նկատմամբ բռնության կամ անտեսման մասին հաղորդում,
- Դեղերի նկատմամբ ռեակցիաների կամ նյութերի հետ կապված խնդիրների մասին հաղորդում,
- Մարդկանց՝ իրենց կողմից օգտագործվող ապրանքների հետկանչի մասին ծանուցում:
- Ծանուցում այն անձին, ով կարող է ենթարկված լինել հիվանդության ազդեցությանը կամ կարող է գտնվել հիվանդության կամ հիվանդագին վիճակի ձեռքբերման կամ տարածման ռիսկի գոտում,
- Ծանուցում համապատասխան պետական մարմին, եթե հիմքեր ունենք կարծելու, որ հիվանդը դարձել է բռնության, անտեսման կամ ընտանեկան բռնության զոհ: Մենք կիրականացնենք այս տեղեկատվության բացահայտումը միայն ձեր համաձայնության դեպքում, կամ երբ դա պահանջվում կամ թույլատրվում է օրենքով:
- Արտակարգ իրավիճակների արձագանքման աշխատակիցներին ՄԻԱՎ/ՁԻԱԶ-ի վարակի վտանգի մասին տեղեկացնելու համար՝ նահանգային և դաշնային օրենքներին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ չափով:

Քիզնես գործընկերներ

Pipeline Health-ը կարող է օգտագործել երրորդ կողմ հանդիսացող քիզնես գործընկերների ծառայությունները՝ իր անունից որոշ գործառույթներ իրականացնելու համար, օրինակ՝ փաստաթղթերի պատճենման ծառայություններ: Երբ այս ծառայությունները մատուցվում են մեր քիզնես գործընկերների կողմից, նրանք կարող են կարիք ունենալ մուտք գործելու ձեր բժշկական տեղեկատվությանը՝ այդ ծառայությունները կատարելու համար: Ձեր բժշկական տեղեկատվությունը պաշտպանելու համար Pipeline Health-ը կնքում է համաձայնագիր նրանց հետ, որը պահանջում է, որ քիզնես գործընկերը պատշաճ կերպով պաշտպանի ձեր տեղեկատվությունը:

Առողջապահական վերահսկողության գործունեություն

Մենք կարող ենք բացահայտել բժշկական տեղեկատվությունը առողջապահական վերահսկող մարմին՝ օրենքով թույլատրված գործունեությունների համար: Այս վերահսկողական գործունեությունները ներառում են, օրինակ՝ աուդիտներ, հետաքննություններ, ստուգումներ և լիցենզավորման գործընթացներ: Այս գործողությունները անհրաժեշտ են, որպեսզի կառավարությունը կարողանա վերահսկել առողջապահական համակարգը, պետական ծրագրերը և քաղաքացիական իրավունքների օրենքների պահպանումը:

Դատական գործեր և վեճեր

Եթե ներգրավված եք դատական գործի կամ վեճի մեջ, մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը՝ դատարանի կամ վարչական մարմնի որոշման հիման վրա: Մենք կարող ենք բացահայտել ձեր մասին բժշկական տեղեկատվությունը նաև ի պատասխան դատական ծանուցագրի, տեղեկատվության բացահայտման պահանջի կամ վեճի մեջ ներգրավված այլ անձի կողմից ներկայացված այլ օրինական գործընթացի, բայց միայն այն



դեպքում, եթե ջանքեր են գործադրվել ձեզ այդ պահանջի մասին տեղեկացնելու համար (ինչը կարող է ներառել ձեզ ուղարկված գրավոր ծանուցումը) կամ պահանջվող տեղեկատվությունը պաշտպանող դատական որոշում ստանալու համար:

Իրավապահ մարմիններ

Մենք կարող ենք տրամադրել բժշկական տեղեկատվություն, եթե դա պահանջվի իրավապահ մարմնի պաշտոնյայի կողմից.

- Ի պատասխան դատարանի որոշման, դատական ծանուցագրի, ձերբակալման կամ խուզարկության օրդերի, դատական կանչի կամ համանման այլ գործընթացի,
- Կասկածյալին, փախստականին, կարևոր վկային կամ անհայտ կորած անձին նույնականացնելու կամ գտնվելու վայրը պարզելու համար,
- Հանցագործության գոհի վերաբերյալ, եթե որոշակի սահմանափակ հանգամանքներում մենք ի վիճակի չենք ստանալ տվյալ անձի համաձայնությունը,
- Մահվան դեպքի վերաբերյալ, որը, մեր կարծիքով, կարող է հանցավոր արարքի հետևանք լինել,
- Հիվանդանոցում տեղի ունեցած հանցավոր արարքի վերաբերյալ,
- Արտակարգ իրավիճակներում՝ հանցագործության, հանցագործության կամ գոհերի գտնվելու վայրի, կամ հանցագործություն կատարած անձի ինքնության, նկարագրի կամ գտնվելու վայրի մասին հաղորդելու համար:

Պիստոլետներ, դատաբժիշկներ և հուղարկավորության ծառայություններ մատուցողներ

Մենք կարող ենք տրամադրել բժշկական տեղեկատվություն դիստրիբյուցիոն կամ դատաբժիշկներին, որքան անհրաժեշտ է, օրինակ՝ մահացած անձին նույնականացնելու կամ մահվան պատճառը որոշելու համար: Մենք կարող ենք նաև տրամադրել հիվանդանոցի հիվանդների վերաբերյալ բժշկական տեղեկատվություն հուղարկավորության ծառայություններ մատուցողներին՝ իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ չափով:

Ազգային անվտանգություն և հետախուզական գործունեություն

Մենք կարող ենք տրամադրել ձեր բժշկական տեղեկատվությունը լիազորված դաշնային պաշտոնյաներին՝ հետախուզական, հակահետախուզական և ազգային անվտանգության այլ գործողությունների համար, որոնք թույլատրված են օրենքով:

Պաշտպանական ծառայություններ Նախագահի և այլ անձանց համար

Մենք կարող ենք բացահայտել ձեր մասին բժշկական տեղեկությունները լիազորված դաշնային պաշտոնյաներին, որպեսզի նրանք կարողանան պաշտպանություն ապահովել Նախագահին, լիազորված անձանց, օտարերկրյա պետությունների ղեկավարներին կամ անցկացնել հատուկ հետաքննություններ:

Կալանավորված անձինք

Եթե գտնվում եք ուղղիչ հաստատությունում կամ իրավապահ մարմնի վերահսկողության տակ, մենք կարող ենք բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը ուղղիչ հաստատությանը կամ իրավապահ պաշտոնյային. 1) որպեսզի հաստատությունը ձեզ տրամադրի առողջապահական ծառայություններ, 2) ձեր առողջության և անվտանգության կամ այլ անձանց առողջության և անվտանգության պաշտպանության համար կամ 3) ուղղիչ հաստատության անվտանգության և ապահովության համար:

Բազմամասնագիտական թիմեր

Մենք կարող ենք բացահայտել առողջական տեղեկատվությունը բազմամասնագիտական անձնակազմից կազմված թիմին, որը ներգրավված է բռնության ենթարկված երեխայի և նրա ծնողների կամ տարեցների նկատմամբ բռնության կամ անտեսման կանխարգելման, բացահայտման, կառավարման կամ բուժման գործընթացում:

Չատուկ կատեգորիաների տեղեկատվություն

Որոշ դեպքերում ձեր առողջական տեղեկատվությունը կարող է ենթարկվել սահմանափակումների, որոնք կարող են սահմանափակել կամ բացառել սույն ծանուցման մեջ նկարագրված որոշ օգտագործումներ կամ բացահայտումներ: Օրինակ՝ կան հատուկ սահմանափակումներ որոշ տեղեկատվության կատեգորիաների օգտագործման կամ բացահայտման նկատմամբ, օրինակ՝ ՄԻԱՎ թեստերի արդյունքներ կամ հոգեկան առողջության, ինչպես նաև ալկոհոլի և հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների դեմ բուժման վերաբերյալ տվյալներ: Կառավարական առողջապահական նպաստների ծրագրերը, օրինակ՝ Medi-Cal-ը, կարող են նաև սահմանափակել շահառուների տեղեկատվության բացահայտումը այն նպատակներով, որոնք կապ չունեն տվյալ ծրագրի հետ:

Օգտագործումներ և բացահայտումներ, որոնք պահանջում են ձեր թույլտվությունը

Մենք կստանանք ձեր գրավոր թույլտվությունը՝ նախքան ձեր առողջական տեղեկատվության օգտագործումը կամ բացահայտումը այն նպատակներով, որոնք նկարագրված չեն սույն ծանուցման մեջ: Մասնավորապես, մենք պետք է ստանանք ձեր թույլտվությունը հետևյալի համար՝

Չատուկ կանոններ հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների գրառումների համար

Եթե մեզանից ստանում եք հոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների (SUD) դեմ բուժում, դաշնային օրենքը (42 CFR Մաս 2) ձեր SUD բուժման գրառումներին տրամադրում

Է HIPAA-ի պահանջներից բացի լրացուցիչ գաղտնիության պաշտպանություն: Այս պաշտպանությունները վերաբերում են ձեր SUD ախտորոշման, բուժման կամ բուժման ուղեգրման հետ կապված ստեղծված կամ ստացված գրառումներին:

ԻՆՉՆ Է ՏԱՐԲԵՐՈՒՄ SUD ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

Սովորաբար պահանջվում է գրավոր համաձայնությունը

Ի տարբերություն այլ բժշկական տեղեկատվության, որը մենք կարող ենք օգտագործել բուժման, վճարման և առողջապահական գործունեության համար առանց ձեր թույլտվության, մենք սովորաբար պետք է ստանանք ձեր հատուկ գրավոր համաձայնությունը՝ SUD բուժման գրառումները նույն նպատակներով օգտագործելու կամ բացահայտելու համար: Դուք կարող եք տրամադրել մեկ ընդհանուր համաձայնություն, որը թույլ կտա մեզ օգտագործել և բացահայտել ձեր SUD բուժման տեղեկատվությունը բոլոր ապագա բուժման, վճարման և առողջապահական գործունեության նպատակներով: Դուք կարող եք նաև սահմանափակել ձեր համաձայնությունը՝ նշելով միայն կոնկրետ օգտագործումներ կամ ստացողներ:

Սահմանափակ բացառություններ

Մենք կարող ենք օգտագործել կամ բացահայտել ձեր SUD բուժման գրառումները առանց ձեր համաձայնության միայն շատ սահմանափակ նպատակներով, ներառյալ՝

- Բժշկական արտակարգ իրավիճակներ
- Հետազոտություն (լրացուցիչ պաշտպանությամբ)
- Աուդիտներ և օրենքով պահանջվող գնահատումներ
- Հանցագործությունների մասին հաղորդում, որոնք կատարվել են մեր հաստատությունում կամ մեր անձնակազմի նկատմամբ

Ինչպես տրամադրել համաձայնությունը. Եթե ցանկանում եք, որ մենք օգտագործենք կամ բացահայտենք ձեր SUD բուժման գրառումները, դուք պետք է ստորագրեք գրավոր համաձայնության ձևաթուղթ: Համաձայնության ձևաթուղթը կսահմանի, թե ինչ տեղեկատվություն կարող է բացահայտվել, ում, ինչ նպատակով և որքան ժամանակ է այն ուժի մեջ: Դուք կարող եք ցանկացած պահի հետ կանչել ձեր համաձայնությունը:

Լրացուցիչ տեղեկությունների համար. Եթե ունեք հարցեր ձեր SUD բուժման գրառումների հետ կապված ձեր իրավունքների մասին, խնդրում ենք կապվել այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության բաժնի հետ, որտեղ դուք ստացել եք բուժօգնություն:

Հոգեթերապիայի նշումներ. Հոգեթերապիայի նշումները այն ընթացքային գրառումներն են, որոնք կատարում է հոգեկան առողջության մասնագետը խորհրդատվական սեանսի ընթացքում և պահվում են առանձին ձեր բժշկական գրառումից: Մենք սովորաբար պետք է ստանանք ձեր թույլտվությունը՝ հոգեթերապիայի նշումները օգտագործելու կամ

բացահայտելու համար:

Յոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների (SUD) խորհրդատվական նշումներ. SUD խորհրդատվական նշումները այն ընթացքային գրառումներն են, որոնք կատարում է SUD խորհրդատուն անհատական կամ խմբային խորհրդատվության սեանսների ընթացքում և պահվում են առանձին ձեռքարկային գրառումից: Դաշնային օրենքի (42 CFR Part 2) համաձայն՝ մենք պետք է ստանանք ձեր հատուկ գրավոր համաձայնությունը՝ SUD խորհրդատվական նշումները օգտագործելու կամ բացահայտելու համար, ***տույնիսկ ձեր բուժման նպատակներով***: Դուք իրավունք ունեք հասանելիություն ստանալ ձեր SUD խորհրդատվական նշումներին (42 CFR §2.23), ի տարբերություն հոգեթերապիայի նշումների, որոնք HIPAA-ի համաձայն մենք կարող ենք չտրամադրել ձեզ:

SUD գրառումների պաշտպանությունն դատական գործընթացներում

Յոգեներգործուն նյութերի օգտագործման խանգարումների (SUD) բուժման գրառումները, որոնք ստացվել են 42 CFR Part 2-ի ենթակա ծրագրերից, կամ այն ցուցմունքները, որոնք փոխանցում են այդ գրառումների բովանդակությունը, չեն կարող օգտագործվել կամ բացահայտվել քաղաքացիական, քրեական, վարչական կամ օրենսդրական գործընթացներում՝ անձի դեմ, բացառությամբ այն դեպքերի, երբ կա՝ գրավոր համաձայնություն կամ դատարանի որոշում, որը տրվել է անձին կամ գրառումը տնօրինողին ծանուցում և լսվելու հնարավորություն տրամադրելուց հետո՝ համաձայն 42 CFR Part 2-ի: Մինչև պահանջվող գրառման օգտագործումը կամ բացահայտումը, դրա օգտագործումը կամ բացահայտումը թույլատրող դատարանի որոշմանը պետք է կցվի դատական ծանուցագիր կամ բացահայտումը պարտադրող այլ իրավական պահանջ:

Մարքեթինգային նպատակներով օգտագործում և բացահայտում

Մենք պետք է ստանանք ձեր թույլտվությունը՝ նախքան ձեր առողջական տեղեկատվությունը օգտագործելը կամ բացահայտելը՝ ձեզ ապրանքներ կամ ծառայություններ մարքեթինգային նպատակներով ներկայացնելու համար, որոշ սահմանափակ բացառություններով:

Առողջական տեղեկատվության վաճառք հանդիսացող բացահայտումներ

Մենք պետք է ստանանք ձեր թույլտվությունը, եթե ձեր առողջական տեղեկատվության բացահայտման դիմաց ստանում ենք վճարում՝ որոշ բացառություններով:

Ձեր թույլտվությունը հետ կանչելու իրավունք

Եթե դուք տրամադրել եք գրավոր թույլտվություն, դուք կարող եք այն ցանկացած պահի հետ կանչել՝ գրավոր ծանուցում ներկայացնելով այն հիվանդանոցի **Առողջապահական տեղեկատվության** բաժնի ղեկավարին, որտեղ ստացել եք բուժում: Զետկանչը չի ազդի այն գործողությունների վրա, որոնք մենք կատարել ենք մինչև ձեր հետկանչը ստանալը:

Վերաբացահայտման հնարավորություն

Երբ մենք ձեր առողջական տեղեկատվությունը տրամադրում ենք մեր կազմակերպությունից դուրս գտնվող անձի, այդ տեղեկատվությունը կարող է կրկին բացահայտվել այդ ստացողի կողմից և այլևս կարող է չպաշտպանվել դաշնային գաղտնիության օրենքներով: Մենք չենք կարող վերահսկել, թե ինչպես են ուրիշները օգտագործում տեղեկատվությունը այն բանից հետո, երբ մենք այն բացահայտում ենք նրանց:

Բուժման այլընտրանքներ և առողջապահական ծառայություններ

Մենք կարող ենք օգտագործել և բացահայտել ձեր առողջական տեղեկությունները՝ ձեզ տեղեկացնելու կամ խորհուրդ տալու համար այն հնարավոր բուժման տարբերակների, այլընտրանքների կամ առողջապահական նպաստների և ծառայությունների մասին, որոնք կարող են հետաքրքրել ձեզ:

Ձեր մասին բժշկական տեղեկատվության վերաբերյալ Ձեր Իրավունքները

Դուք ունեք հետևյալ իրավունքները՝ ձեր մասին մեր կողմից պահպանվող բժշկական տեղեկատվության նկատմամբ:

Դիտելու և պատճենը ստանալու իրավունք

Դուք իրավունք ունեք դիտելու և ստանալու ձեր բժշկական տեղեկատվության պատճենը, որը կարող է օգտագործվել ձեր խնամքի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար: Սովորաբար սա ներառում է բժշկական և հաշվարկային գրառումները, սակայն կարող է չներառել որոշ հոգեթերապիայի նշումներ կամ որոշ այլ հոգեկան առողջության տվյալներ:

Ձեր մասին որոշումներ կայացնելու համար օգտագործվող բժշկական տեղեկատվությունը դիտելու կամ դրա պատճենը ստանալու համար դուք պետք է գրավոր դիմում ներկայացնեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ ստացել եք բուժում: Եթե դուք պահանջում եք տեղեկատվության պատճեն, մենք կարող ենք գանձել վճար՝ պատճենման, փոստային առաքման կամ ձեր հարցման հետ կապված այլ ծախսերի համար:

Մենք կարող ենք մերժել ձեր դիմումը որոշ շատ սահմանափակ դեպքերում: Եթե ձեզ մերժվում է բժշկական տեղեկատվությանը հասանելիությունը, դուք կարող եք պահանջել, որ այդ որոշումը վերանայվի: Վերանայումը կկատարի հիվանդանոցի կողմից ընտրված այլ լիցենզավորված առողջապահական մասնագետ: Վերանայումը իրականացնող անձը չի լինի այն անձը, ով մերժել է ձեր դիմումը: Մենք կհետևենք վերանայման արդյունքներին:

Փոփոխություններ կատարելու իրավունք

Եթե կարծում եք, որ ձեր մասին մեր ունեցած բժշկական տեղեկատվությունը սխալ է կամ թերի, կարող եք դիմել մեզ՝ այդ տեղեկատվության մեջ լրացում կատարելու դիմումով: Դուք իրավունք ունեք պահանջել փոփոխություն ձեր տեղեկատվության մեջ այնքան ժամանակ, քանի դեռ այն պահվում է հիվանդանոցի կողմից կամ նրա համար:

Փոփոխությունն պահանջելու համար ձեր դիմումը պետք է լինի գրավոր և ներկայացվի այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ դուք ստացել եք բուժում: Բացի այդ, դուք պետք է ներկայացնեք պատճառ, որը հիմնավորում է ձեր պահանջը:

Մենք կարող ենք մերժել ձեր փոփոխության խնդրանքը, եթե այն գրավոր չէ կամ չի պարունակում հիմնավորում: Նաև կարող ենք մերժել, եթե դուք խնդրում եք փոփոխել տեղեկատվություն, որը`

- չի ստեղծվել մեր կողմից, եթե այն ստեղծած անձը կամ կազմակերպությունը այլևս հասանելի չէ փոփոխություն կատարելու համար,
- չի հանդիսանում հիվանդանոցի կողմից կամ նրա համար պահվող բժշկական տեղեկատվության մաս,
- չի հանդիսանում այն տեղեկատվության մաս, որը դուք իրավունք ունեք դիտելու կամ պատճենելու,
- կամ, եթե այն ճշգրիտ և ամբողջական է:

Նույնիսկ եթե ձեր պահանջը մերժվի, դուք իրավունք ունեք ներկայացնել գրավոր հավելում` ոչ ավելի քան 250 բառ, ցանկացած գրառման կամ հայտարարության վերաբերյալ, որը դուք կարծում եք` թերի կամ սխալ է: Եթե դուք հստակ գրավոր նշեք, որ ցանկանում եք, որպեսզի այդ հավելումը ներառվի ձեր բժշկական գրառումներում, մենք այն կկցենք ձեր գործին և կներառենք յուրաքանչյուր բացահայտման ժամանակ, երբ փոխանցվում է տվյալ տեղեկատվությունը:

Փոփոխությունն պահանջելու համար կապվեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության բաժնի հետ, որտեղ ստացել եք բուժում:

Թույլտվությունը հետ կանչելու իրավունք

Դուք իրավունք ունեք հետ կանչել ձեր կողմից նախկինում տրված թույլտվությունը` ձեր բժշկական տեղեկատվության օգտագործման և բացահայտման համար: Հետկանչ կատարելու համար դուք պետք է ձեր դիմումը ներկայացնեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ ստացել եք բուժում: Ցանկացած նման հետկանչ կարող է կիրառվել միայն այն օգտագործումների կամ բացահայտումների նկատմամբ, որոնց համար դուք տվել եք ձեր հստակ թույլտվությունը, և չի վերաբերում այն ոլորտներին, որոնց համար ձեր համաձայնությունը չի պահանջվում, օրինակ` իրավապահ մարմինների հարցումներ կամ հանրային առողջապահական գործունեություն:

Բացահայտումների հաշվետվությունն ստանալու իրավունք

Դուք իրավունք ունեք պահանջելու «բացահայտումների հաշվետվություն»: Սա այն բացահայտումների ցանկն է, որոնք մենք կատարել ենք ձեր մասին բժշկական տեղեկատվության վերաբերյալ` բացառությամբ մեր սեփական օգտագործումների` բուժման, վճարման և առողջապահական գործունեության նպատակներով (ինչպես նկարագրված է վերևում), ինչպես նաև օրենքով նախատեսված այլ բացառությունների:

Այս ցանկը կամ հաշվետվությունը ստանալու համար դուք պետք է գրավոր դիմում ներկայացնեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ ստացել եք բուժում: Ձեր դիմումը պետք է նշի ժամանակահատված, որը չի կարող գերազանցել վեց տարին և չի կարող ներառել 2003 թվականի ապրիլի 14-ից առաջ եղած տվյալներ: Դուք պետք է նաև նշեք, թե ինչ ձևաչափով եք ցանկանում ստանալ այդ ցուցակը (օրինակ՝ թղթային կամ էլեկտրոնային): Առաջին հաշվետվությունը, որը դուք պահանջում եք 12 ամսվա ընթացքում, կլինի անվճար: Լրացուցիչ հաշվետվությունների համար մենք կարող ենք գանձել դրա պատրաստման ծախսերը: Մենք ձեզ նախապես կտեղեկացնենք ծախսերի մասին, և դուք կարող եք հրաժարվել կամ փոփոխել ձեր դիմումը՝ մինչ որևէ ծախսի առաջացումը:

Բացի այդ, մենք ձեզ կտեղեկացնենք օրենքով պահանջվող դեպքերում՝ ձեր չպաշտպանված առողջական տեղեկատվության խախտման դեպքում:

Սահմանափակումներ պահանջելու իրավունք

Դուք իրավունք ունեք պահանջելու սահմանափակում կամ սահմանափակել այն բժշկական տեղեկատվությունը, որը մենք օգտագործում կամ բացահայտում ենք ձեր մասին՝ բուժման, վճարման կամ առողջապահական գործունեության նպատակներով: Դուք նաև իրավունք ունեք սահմանափակել այն տեղեկատվությունը, որը մենք բացահայտում ենք ձեր խնամքին կամ դրա վճարմանը ներգրավված անձին, օրինակ՝ ընտանիքի անդամին կամ ընկերոջը: Օրինակ՝ դուք կարող եք խնդրել, որ մենք չօգտագործենք կամ չբացահայտենք ձեր վիրահատության մասին տեղեկատվությունը: Մենք պարտավոր չենք համաձայնել ձեր բոլոր պահանջներին, բացառությամբ այն դեպքի, երբ դուք խնդրում եք սահմանափակել տեղեկատվության բացահայտումը առողջապահական ծրագրին կամ ապահովագրողին՝ վճարման կամ առողջապահական գործունեության նպատակներով, և երբ դուք կամ ձեր անունից մեկ ուրիշը (բացի ապահովագրողից) ամբողջությամբ վճարել է տվյալ ծառայության համար:

Նույնիսկ եթե դուք խնդրում եք այդ հատուկ սահմանափակումը, մենք կարող ենք այդ տեղեկատվությունը տրամադրել առողջապահական ծրագրին կամ ապահովագրողին՝ ձեր բուժման նպատակներով:

Եթե մենք համաձայնվենք այլ սահմանափակումների, մենք կհետևենք ձեր պահանջին, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը անհրաժեշտ է ձեզ արտակարգ բուժում տրամադրելու համար:

Սահմանափակումներ պահանջելու համար դուք պետք է գրավոր դիմում ներկայացնեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ ստացել եք բուժում: Ձեր դիմումում պետք է նշեք՝ 1) ինչ տեղեկատվություն եք ցանկանում սահմանափակել, 2) արդյոք ցանկանում եք սահմանափակել օգտագործումը, բացահայտումը, թե երկուսն էլ, 3) ում նկատմամբ պետք է կիրառվեն այդ սահմանափակումները, օրինակ՝ ձեր ամուսնուն կամ կնոջը:

Գաղտնի հաղորդակցությունների պահանջելու իրավունք



Դուք իրավունք ունեք պահանջելու, որ մենք ձեզ հետ բժշկական հարցերի վերաբերյալ կապվենք որոշակի ձևով կամ որոշակի վայրում: Օրինակ՝ դուք կարող եք խնդրել, որ մենք ձեզ հետ կապվենք միայն աշխատանքի վայրում կամ միայն փոստով: Գաղտնի հաղորդակցություններ պահանջելու համար դուք պետք է գրավոր դիմում ներկայացնեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության կառավարման բաժին, որտեղ ստացել եք բուժում: Մենք ձեզանից չենք հարցնի ձեր խնդրանքի պատճառը: Մենք կբավարարենք բոլոր ողջամիտ պահանջները: Ձեր դիմումը պետք է հստակ նշի, թե ինչպես կամ որտեղ եք ցանկանում, որ ձեզ հետ կապ հաստատվի:

Գաղտնի հաղորդակցություններ պահանջելու համար կապվեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության բաժնի հետ, որտեղ ստացել եք ծառայություններ:

Այս ծանուցման թղթային պատճենը ստանալու իրավունք

Դուք իրավունք ունեք ստանալու այս ծանուցման թղթային պատճենը: Դուք կարող եք ստանալ դրա պատճենը ընդունվելու պահին կամ ցանկացած ժամանակ: Նույնիսկ եթե համաձայնվել եք այս ծանուցումը ստանալ էլեկտրոնային ձևով, դուք դեռ իրավունք ունեք ստանալու դրա թղթային պատճենը: Դուք կարող եք ստանալ այս ծանուցման պատճենը մեր կայքից՝ Pipeline Healthhospitals.com կամ ըստ դիմումի:

Թղթային պատճենը ստանալու համար կապվեք այն հիվանդանոցի Առողջապահական տեղեկատվության բաժնի հետ, որտեղ ստացել եք բուժում:

ԱՅՍ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք իրավունք ենք վերապահում փոփոխել այս ծանուցումը: Մենք իրավունք ենք վերապահում, որ վերանայված կամ փոփոխված ծանուցումը կիրառվի նաև ձեր մասին արդեն մեր մոտ պահվող բժշկական տեղեկատվության նկատմամբ, ինչպես նաև ապագայում ստացվող տեղեկատվության նկատմամբ: Մենք կիրապարակենք գործող ծանուցման պատճենը հիվանդանոցում: Ծանուցման առաջին էջում, վերևի աջ անկյունում, նշված կլինի դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Բացի այդ, յուրաքանչյուր անգամ, երբ դուք գրանցվում եք կամ ընդունվում եք հիվանդանոց բուժման կամ առողջապահական ծառայությունների համար՝ որպես ստացիոնար կամ ամբուլատոր հիվանդ, մենք ձեզ կառաջարկենք գործող ծանուցման պատճենը:

ԲՈՂՈՔՆԵՐ

Եթե կարծում եք, որ ձեր գաղտնիության իրավունքները խախտվել են, դուք կարող եք բողոք ներկայացնել հիվանդանոց կամ ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարության քարտուղարին: Հիվանդանոցին բողոք ներկայացնելու համար խնդրում ենք էլեկտրոնային նամակ ուղարկել կամ զանգահարել մեր կորպորատիվ գրասենյակ՝ 310-356-0515 հեռախոսահամարով՝ մեր Գաղտնիության գլխավոր պատասխանատուի հետ խոսելու համար: Բոլոր բողոքները պետք է ներկայացվեն գրավոր ձևով:



ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարությանը բողոք ներկայացնելու համար`

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ, ԱՄՆ Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարություն:

Կայք` <https://www.hhs.gov/hipaa/filing-a-complaint/index.html>

Հեռախոս` 1-877-696-6775

Ոչ մի պատասխանատվություն

Դուք չեք պատժվի կամ չեք ենթարկվի որևէ վրեժխնդրության բողոք ներկայացնելու համար:

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ

Բժշկական տեղեկատվության այն օգտագործումները և բացահայտումները, որոնք ներառված չեն այս ծանուցման մեջ կամ չեն կարգավորվում մեզ վրա կիրառվող օրենքներով, կիրականացվեն միայն ձեր գրավոր թույլտվությամբ: Եթե դուք մեզ թույլտվություն եք տալիս օգտագործել կամ բացահայտել ձեր բժշկական տեղեկատվությունը, դուք կարող եք ցանկացած պահի այդ թույլտվությունը գրավոր կերպով հետ կանչել: Եթե դուք հետ կանչեք ձեր թույլտվությունը, մենք կդադարեցնենք ձեր բժշկական տեղեկատվության հետագա օգտագործումն ու բացահայտումը այն նպատակների համար, որոնք ընդգրկված են ձեր գրավոր թույլտվությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ մենք արդեն գործել ենք այդ թույլտվության հիման վրա: Դուք հասկանում եք, որ մենք չենք կարող հետ վերցնել այն բացահայտումները, որոնք արդեն կատարել ենք ձեր թույլտվությամբ, և որ մենք պարտավոր ենք պահպանել ձեր բուժման վերաբերյալ մեր գրառումները:



ԳԱՐՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ

I. Հիվանդանոցների գաղտնիության գրասենյակներ

Մեր Գաղտնիության գլխավոր պատասխանատունն վերահսկում է հիվանդների բժշկական տեղեկատվության բացահայտումները: Դուք կարող եք զանգահարել ստորև նշված հեռախոսահամար(ներ)ով՝ խոսելու Գաղտնիության գլխավոր պատասխանատուի հետ, կամ կարող եք ուղարկել էլ. նամակ Compliance@PipelineHealthhospitals.com:

Memorial Hospital of Gardena
1145 W. Redondo Beach Blvd. Gardena, CA 90247
Հասցեատեր Գաղտնիության հարցերով գլխավոր տնօրենին
Հեռ.՝ 310-356-0515
Privacy@PipelineHealth.US

Coast Plaza Hospital
13100 Studebaker Rd. Norwalk, CA 90650
Հասցեատեր Գաղտնիության հարցերով գլխավոր տնօրենին
Հեռախոսահամար՝ 310-356-0515
Privacy@PipelineHealth.US

East Los Angeles Doctors Hospital
4060 Whittier Blvd. | Los Angeles, CA 90023
Հասցեատեր Գաղտնիության հարցերով գլխավոր տնօրենին
Հեռախոսահամար՝ 310-356-0515
Privacy@PipelineHealth.US

Community Hospital of Huntington Park
2623 E. Slauson Ave. | Huntington Park, CA 90255
Հասցեատեր Գաղտնիության հարցերով գլխավոր տնօրենին
Հեռախոսահամար՝ 310-356-0515
Privacy@PipelineHealth.US

